«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՏՆՏԵՍԱԳԻՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ»
ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՌԵԿՏՈՐԱՏԻ

ՈՐՈՇՈՒՄ

3 փետրվարի 2021 թվականի

2020-2021 ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՏԱՐՎԱ ԵՐԿՐՈՐԴ ԿԻՍԱՄՅԱԿԻ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑԸ ԿԱԶՄԱԿԵՐՊԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Նոր կորոնավիրուսային համավարակով պայմանավորված՝ «Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարան» պետական ոչ առևտրային կազմակերպության ռեկտորատը ո ր ո շ ու մ է.

1. 2020-2021 ուսումնական տարվա երկրորդ կիսամյակի ուսումնական գործընթացը կազմակերպել առկա եղանակով, 3 (երեք) հերթով՝ դասերի տևողությունը սահմանելով 70 րոպե:

	1-ին հերթ	**2-րդ հերթ**	**3-րդ հերթ**
1 - 2	09:30 - 10:40	14:00 - 15:10	18:20 - 19:30
3 - 4	10:50 - 12:00	15:20 - 16:30	19:40 - 20:50
5 - 6	12:10 - 13:20	16:40 - 17:50	21:00 - 22:10
Ախտահանման ժամեր	07:30 - 8:30	13:20 - 14:00	17:50 - 18:20

2. Ելնելով ուսանողների հավասարաչափ բաշխման և կուտակումներից խուսափելու անհրաժեշտությունից՝ ուսումնական գործընթացի կազմակերպման հերթափոխերը սահմանել հետևյալ կերպ՝
   1) առկա բակալավրիատի 1-ին, 2-րդ և 3-րդ կուրսերը՝ առաջին հերթ,
   2) առկա մագիստրատուրայի 1-ին, հեռակա մագիստրատուրայի 1-ին, 2-րդ և հեռակա բակալավրիատի 1-4-րդ կուրսերը՝ երկրորդ հերթ,
   3) առկա մագիստրատուրայի 1,5 տարվա ուսուցման 1-ին կուրսերը՝ երրորդ հերթ:
3. 2020-2021 ուսումնական տարվա վերահանձնումները կազմակերպել առցանց եղանակով:
4. Առավելագույնը 12 կրեդիտ կազմող ակադեմիական պարտքեր ունեցող ուսանողների վերահանձնումները կազմակերպել **առկա եղանակով:**

5. Մինչև փետրվարի 20-ը իրականացնել moodle.asue.am հարթակում 2020-2021 ուսումնական տարվա երկրորդ կիսամյակի բոլոր կրթաձևերի մոդուլների ձևավորման և պատշաճ լրացման աշխատանքները:
6. Դասախոսություններին, սեմինար և լաբորատոր պարապմունքներին իրականացնել ուսանողների բացակայությունների հաշվառում: Հաշվառումը և գնահատումն իրականացնել և՛ թղթային մատյաններում, և՛ ums.asue.am հարթակի էլեկտրոնային մատյաններում:
7. Համալսարանում սահմանել հետևյալ հակահամաճարակային կանոնները.
   1) Մինչև համալսարան մուտք գործելը պահպանել սոցիալական հեռավորություն՝ կանգնելով համալսարանի մուտքերի առջև արված գծանշումներով:
   2) Համալսարան մուտք գործելիս պարտադիր կրել պաշտպանիչ դիմակ:
   3) Կատարել ուսանողների և աշխատակիցների անհատական ջերմաչափում: Վարել ուսանողների և աշխատակիցների ջերմաչափման մատյան: Արգելել 37 C^{o} և ավելի ջերմաստիճան ունեցող ուսանողների և աշխատակիցների մուտքը բուհ:
   4) Պարտադիր կրել պաշտպանիչ դիմակ համալսարանում գտնվելու ամբողջ ժամանակահատվածում:
   5) Դասամիջոցներին ուսանողներին արգելել համալսարանի տարածքից դուրս գալ:
8. Ուսանողները և աշխատակիցները համալսարան պետք է մուտք գործեն հետևյալ մուտքերից.
   1) Կառավարման ֆակուլտետ՝ մուտքը Նալբանդյան փողոցից (կենտրոնական մասնաշենք):
   2) Տնտեսության կարգավորման և միջազգային տնտեսական հարաբերությունների ֆակուլտետ՝ մուտքը Ա.Մանուկյան փողոցից (դարպասներ):
   3) Մարքեթինգի և բիզնեսի կազմակերպման ֆակուլտետ՝ մուտքը Ա.Մանուկյան փողոցից (դարպասներ):
   4) Ֆինանսական ֆակուլտետ՝ մուտքը Ա.Մանուկյան փողոցից (ֆինանսական ֆակուլտետ):
   5) Հաշվապահական հաշվառման և աուդիտի ֆակուլտետ՝ մուտքը Ա.Մանուկյան փողոցից (ֆինանսական ֆակուլտետ):
   6) Ինֆորմատիկայի և վիճակագրության ֆակուլտետ՝ մուտքը Պ.Սևակի փողոցից (հասցե՝ ք. Երևան, 0069, Պարույր Սևակի 77):

9. Հանձնարարել դեկաններին՝
   1) յուրաքանչյուր ակադեմիական խմբին հատկացնել առանձին լսարան և հսկողություն իրականացնել դասացուցակին կցված լսարանների փոփոխությունների բացառման նկատմամբ,
   2) բացառել դասաձախողումները և դասաձախողման արձանագրված յուրաքանչյուր դեպքի առնչությամբ զեկուցել ռեկտորատին,
   3) հսկողություն իրականացնել ums.asue.am հարթակում էլեկտրոնային մատյանների պատշաճ վարման նկատմամբ,
   4) հսկողություն իրականացնել ֆակուլտետի տարածքում անձանց միջև սոցիալական հեռավորության պահպանման, ինչպես նաև պաշտպանիչ դիմակներ կրելու նկատմամբ:
10. Հանձնարարել վարչատնտեսական և կազմակերպական դեպարտամենտի տնօրենին՝
   1) հսկողություն իրականացնել համալսարանում և մերձակա տարածքում պատշաճ գծանշումների իրականացման և պահպանման նկատմամբ,
   2) հսկողություն իրականացնել համալսարանում սանիտարահիգիենիկ և հակահամաճարակային նորմերի պահպանման, յուրաքանչյուր հերթափոխից հետո լսարանների և տարածքի ախտահանման կազմակերպման, ախտահանիչ միջոցների տեղադրման և դրանցում ախտահանող նյութերի առկայության ապահովման նկատմամբ,
   3) հսկողություն իրականացնել ուսանողների և աշխատակիցների ջերմաչափման, մատյանների վարման նկատմամբ՝ բացառելով 37 C^{o} և ավելի ջերմություն ունեցող, ինչպես նաև առանց պաշտպանիչ դիմակների անձանց մուտքը համալսարանի տարածք,
   4) հսկողություն իրականացնել համալսարանի տարածքում դասամիջոցների ընթացքում անձանց կուտակումների նկատմամբ՝ բացառելով դրանք:
11. Սույն որոշման կատարման նկատմամբ հսկողությունը վերապահել ուսումնական աշխատանքների գծով պրոռեկտոր Ա.Գրիգորյանին:
12. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

Ռեկտոր՝ **Դիանա Գալոյան**

2021 թ. փետրվարի 3
Երևան